ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

ԿԱՐԾԻՔ

Լիլիթ Վիկտորի Դալլաքյանի Ի.Գ.00.02 - ″Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ″ մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ″Հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունները ՌԴ-ԱՄՆ աշխարհաքաղաքական շահերի համատեքստում″ վերտառությամբ ատենախոսության վերաբերյալ

Լ.Վ. Դալլաքյանի **″Հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունները ՌԴ-ԱՄՆ աշխարհաքաղաքական շահերի համատեքստում″** թեկնածուական ատենախոսության թեման առավել քան արդիական է՝ հաշվի առնելով Հարավային Կովկասում ընթացող խորքային աշխարհաքաղաքական փոխակերպումները: Տարածաշրջանի անվտանգային ճարտարապետության ձևավորման շուրջ ընթացող բարդ գործընթացները, դրանցում արտատարածաշրջանային դերակատարների ակտիվ ներգրավվածությունը նոր ռիսկեր ու մարտահրավերներ է ստեղծում տարածաշրջանի երկրների, նրանց ինքնիշխան ու ժողովրդավարական զարգացման համար: Միաժամանակ, փաստացի վերածվելով աշխարհաքաղաքական առանցքային ուժերի կոշտ մրցակցության կենտրոններից մեկի՝ Հարավային Կովկասը առերեսվում է նաև կայուն տնտեսական զարգացման խոչընդոտների հետ, ինչը հատկապես իր դրսևորումն է ստանում գեոտնտեսական, մասնավորապես՝ կոմունիկացիոն-ենթակառուցվածքային հարցերում: Ստեղծված իրավիճակում տարածաշրջանի երկրների ու, մասնավորապես, Հայաստանի առաջ ծառանում են պրագմատիկ ու հավասարակշռված, բազմավեկտոր ու իրապես դիվերսիֆիկացված արտաքին քաղաքականության մշակման ու իրականացման մարտահրավերները, ինչի հիմքում պետք է նախևառաջ ընկած լինի պետության ազգային շահերի հստակեցումն ու ինստիտուցիոնալ զարգացումը:

Ներկայացված աշխատանքի նպատակն ու խնդիրները հստակ են ձևակերպված և համապատասխանում են ստացված արդյունքներին, որոնք ներկայացված են եզրակացություններում: Լեռնային Ղարաբաղի, Հարավային Օսիայի և Աբխազիայի դեպքերի վերլուծությունը թույլ է տվել ատենախոսին գալ համեմատական-քաղաքագիտական որոշ եզրակացությունների: Որպես հետազոտության կարևոր արդյունք կարելի է առանձնացնել ներկայացված առաջարկությունները, հատկապես հայ-ադրբեջանական միջպետական սահմանների ու տարածքային վեճերի լուծման, ՄԱԿ-ի միջազգային քրեական դատարանում ադրբեջանցիների կողմից մարդկության դեմ ուղղված հանցագործությունների քննման, ինչպես նաև Արցախում իրականացված էթնիկ զտումների համարժեք քրեաիրավական գնահատական տալու վերաբերյալ:

Ատենախոսության արդյունքները ներկայացված են թվով 6 գիտական հոդվածներում: Այնուամենայնիվ, ցանկալի կլիներ, որպեսզի ատենախոսը կիսվեր իր հետազոտության արդյունքներով նաև միջազգային նշանակություն ունեցող՝ գրախոսվող գիտական հրատարակություններում՝ հաշվի առնելով թեմայի արդիականությունն ու կարևորությունն արդի միջազգային հարաբերություններում:

Միաժամանակ, Լ.Վ. Դալլաքյանի "Հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունները ՌԴ-ԱՄՆ աշխարհաքաղաքական շահերի համատեքստում" վերտառությամբ աշխատանքը զուրկ չէ որոշ թերություններից ու բացթողումներից, որոնք առանձին դեպքերում համակարգային բնույթ են կրում ու նվազեցնում են աշխատանքի գիտականության աստիճանը:

1. Կարծում ենք, որ ատենախոսության թեման կոռեկտ չէ ձևակերպված: Մասնավորապես, "ՌԴ-ԱՄՆ աշխարհաքաղաքական շահեր" սահմանումը ոչ միայն հակագիտական է, այլ անտրամաբանական: Եթե ատենախոսնի ի նկատի ունի ԱՄՆ և ՌԴ աշխարհաքաղաքական շահերը, ապա հենց այդպես էլ պետք է ձևակերպեր խնդիրը: Ավելին, հետազոտության օբյեկտն ու առարկան սահմանելիս՝ ատենախոսը ևս

կիրառում է "ռուս-ամերիկյան շահեր" ձևակերպումը, ինչը հակասում է հետագա շարադրանքին, որում ներկայացվում է այդ շահերի հակադրումը: Կարծում ենք, որ սա ոչ թե լեզվական-ոճաբանական խնդիր է, այլ քաղաքագիտական ալոգիզմ:

2. Ատենախոսության առաջին գլխի 1-ին՝ տեսական բնույթ կրող ենթագլուխը նվիրված է ազգերի ինքնորոշման իրավունքին, մինչդեռ վերջինս աշխատանքի կենտրոնական հիմնախնդիրը չէ, այլապես այն իր արտացոլումը պետք է ստանար ատենախոսության վերանգրում: Ցանկացած ատենախոսության առաջին գլուխը կամ առաջին ենթագլուխները պետք է նվիրված լինեն գիտական խնդրի տեսական կողմին, և հաշվի առնելով տվյալ ատենախոսության թեման՝ տրամաբանական կլիներ, եթե հեղինակն անդրադառնար կոնֆլիկտաբանական և աշխարհաքաղաքական դասական ու նորագույն տեսություններին՝ սահմանելով հետազոտության տեսական ու հայեցակարգային շրջանակները: Անհրաժեշտ էր ատենախոսության առաջին գլուխը նվիրել խնդրի տեսական կողմին, առանց որի աշխատանքը չի կարող ամբողջական լինել: Արձանագրենք, այսպիսով, որ աշխատանքում բացակայում է տեսական մասը:

3. "Գիտական նորույթ" բաժնի հիմնադրույթների մեծ մասը չի համապատասխանում թեկնածուական ատենախոսության ներկայացվող պահանջներին: Պարբերաբար "նորովի" բառն օգտագործելը այս կամ այն հիմնադրույթին գիտական նորույթ չի հաղորդում: Կարծում ենք, որ ներկայացված 7 կետերից միայն մեկը՝ 5-րդը կարող է մասամբ գիտական նորույթ . պարունակել, սակայն բացառապես լրացուցիչ հիմնավորման պարագայում: Այս կետի համաձայն՝ տարածաշրջանի անվտանգության ճարտարապետությունը պայմանավորված է *"ԱՄՆ-ՌԴ և ուժային հայտնի այլ կենտրոնների համագործակցության մշակույթով և շահերի համադրմամբ, այլ ոչ թե առճակատմամբ"* (էջ 16): Այս դրույթը պետք է համակողմանիորեն հիմնավորվի, այլապես տարընթերցումների առիթ է ստեղծում:

4. Ատենախոսությունը հարուստ է հակագիտական, հրապարակախոսական սահմանումներով ու արտահայտություններով: Օրինակ, էջ 15-ում ատենախոսը գրում է. *"Հարավային Կովկասի երկրները դատապարտված են բալանսավորել իրենց քաղաքականությունը Մոսկվայի և Վաշինգտոնի միջև՝ փորձելով* ***զոհ չգնալ*** *նրանց աշխարհաքաղաքական նկրտումներին"*: Նույնը եզրակացություններում: Կետ 10-ում ատենախոսը գրում է, որ *"Թրամփի իշխանության ժամանակ Ռուսաստանի Դաշնությունը և Թուրքիան փաստորեն քարտ բլանշ էին ստացել Միացյալ Նահանգներից, որ Վաշինգտոնը չի միջամտի Անկարայի և Մոսկվայի ազդեցության գոտիների բաժանման գործընթացին"* (էջ 151): Կամ՝ *"Արցախյան երկրորդ պատերազմից առաջ Թուրքիան իր դաշնակից Ադրբեջանի հետ հասկացավ, որ Ռուսաստանը չի ընդդիմանա թուրք-ադրբեջանական տանդեմին և, ինչպես հարյուր տարի առաջ, կզոհաբերի հայկական տարածքները որպես մանրադրամ"* (էջ 154): Մի կողմ դնելով նշված արտահայտությունների օբյեկտիվ կամ սուբյեկտիվ լինելը՝ արձանագրենք, որ խախտված են գիտական լեզվի հիմնարար սկզբունքները, ինչով աչքի է ընկնում ամբողջ ատենախոսությունը: Մյուս կողմից, կոռեկտ ձևակերպման պարագայում նման եզրակացությունները պետք է լինեն խորքային հետազոտության արդյունք (արխիվային աշխատանք, փորձագիտական հարցազրույցներ, պաշտոնական հայտարարությունների համադրում, կոնտենտ-վերլուծություն այլն), մինչդեռ դրանք զուտ կարգախոսային բնույթ են կրում:
5. Հարավային Կովկասում ՌԴ և ԱՄՆ շահերը հասկանալու, դրանք քիչ թե շատ օբյեկտիվորեն գնահատելու համար ատենախոսը պետք է անդրադառնար այդ երկրների արտաքին քաղաքականության, ազգային անվտանգության, ռազմական դոկտրիններին ու ռազմավարություններին: Միաժամանակ, անհրաժեշտ էր դրանք համադրել տարածաշրջանի երկրների համապատասխան ռազմավարական փաստաթղթերի հետ, ինչը չի արվել: Նման

խնդիրներին նվիրված **ակադեմիական** քաղաքագիտական հետազոտությունը ենթադրում է ռազմավարական փաստաթղթերի խորքային վերլուծություն:

6. Էջ 31-ում կարդում ենք. *"Մինչ օրս գիտնականների միջև զոյություն ունի բանավեճ, թե ովքեր են ինքնորոշման իրավունքի սուբյեկտները"*: Նույն էջում՝ *"Իրավագետները միակարծիք են, որ զաղութացված ժողովուրդները լիովին օգտվում են ինքնորոշման իրավունքից"*: Ակադեմիական բարեվարքությունը պահանջում է, որպեսզի ատենախոսը հստակեցնի, թե որ գիտնականների մասին է խոսքը, թե որ իրավաբաններն են միակարծիք այս կամ այն հարցի վերաբերյալ և, մասնավորապես, որ գիտական աշխատություններում է շարադրված նշված բանավեճը:
7. Օգտագործված գրականության մեջ գրեթե բացակայում են վերջին 5 տարվա ընթացքում հրապարակված գիտական աշխատությունները, ինչը բավականին խնդրահարույց է, հաշվի առնելով, որ ակադեմիական մշակույթի կենտրոնական սկզբունքներից է վերջին շրջանում ստացված գիտական արդյունքների վերհանումն ու դրանց հիման վրա նոր արդյունքների ապահովումը: Մասնավորապես, ընտրված թեման ու դրա շրջանակներում Արցախյան երկրորդ պատերազմից ի վեր աշխարհաքաղաքական գործընթացների վերլուծությունը նորագույն գրականության ակնարկ է ապահանջում: Մինչդեռ օգտագործված 132 աղբյուրներից միայն 12-ն է հրապարակվել 2020 թ.-ին ու դրանից հետո, ընդ որում դրանցից 7-ը գիտական չեն:
8. Գրականության ցանկը անհրաժեշտ էր կազմել ոչ թե ըստ լեզուների, այլ տեսակների՝ գիտական հոդվածներ, մենագրություններ, պաշտոնական փաստաթղթեր, ԶԼՄ-ներ և այլն:
9. Ատենախոսության առանձին հատվածներ, որոնցում շարադրված են տարբեր փաստեր ու տվյալներ, գրեթե հղումներ չեն պարունակում՝ բացառությամբ մի քանի կայքային, ոչ գիտական հղումների, ուստի միշտ չէ հնարավոր ապահովել ներկայացված նյութի վերիֆիկացումը (տես

էջեր 38-48՝ 1 հղում, 73-78՝ հղում չկա, 86-100՝ 3 հղում, 109-124՝ 5 կայքային հղում, 131-138՝ հղում չկա):

Նշված դիտողություններն էապես նվազեցնում են Լ.Վ. Դալլաքյանի **"Հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունները ՌԴ-ԱՄՆ աշխարհաքաղաքական շահերի համատեքստում"** թեկնածուական ատենախոսության գիտական արժեքը: Միաժամանակ, ընդհանուր առմամբ, այն համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, և հաջող պաշտպանության դեպքում ատենախոսը կարող է արժանանալ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի ԻԳ.00.02 - "Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ" մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հայ-Ռուսական համալսարանի
քաղաքագիտության ամբիոնի պրոֆեսոր
Վահե Դավթյան

Պաշտոնական ընդդիմախոս քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վահե Դավթյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՌՀ գիտական քարտուղար՝
բ.գ.թ. Ռ. Կասաբաբովա
ք. Երևան
« 3 » մարտի 2024 թ.